«...Միայն կոչմամբ եւեթ պատրիարք անուանեալ առաջնորդք նստին թագաւորական իշխանութեամբ, և արծաթոյ ընտրութեամբ սպրդեալ ի ներքս մտանեն՝ յանձանց և ի սուտակասպասից ընծայեալք, և ոչ յԱստուծոյ։ ... Խազմասէրք և խռովարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան և վասն նախանձու և վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան, գումարտակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի, և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակասպաս արքանեակք, և զօրավիգ լինէին նոցա, և ապա գնացեալ... տային կաշառս յոլովս նոցա, և վանէին զախոյեանն, և առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարքութեան և առաջնորդութեան... Յայսմ պատճառէ՝ ժողովրդականաց քաղաքին բազմաց եղեւ վիշտ և վըտանգ և վնաս, զի ոմանք եղեն տնանկք և աղքատք, զրկեալք յընչից և յապրանաց, ի տանց և ի հայրենեաց, և ոմանք ի բանտս և ի կալանս մեռան, և ոմանք վըտարական լեալ՝ ի հեռաւոր քաղաքս նըժդեհութեամբ շրջէին, հեռացեալք յընտանեաց և ի ծանօթից, և այնպէս զաւուրս կենաց վճարէին» (19)։

---

(19) Առաքել Դաւրիժեցի, Պատմ. Էջմիածին, 1884, էջ 257-259։